

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«02» հոկտեմբեր 2012 թ.

N 86-Ղ/1

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1009-Ն որոշման 3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ


1. Հաստատել «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել բնակարանի անհատույց օգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Զուրաբյանին՝ 10-օրյա ժամկետում Կազմակերպության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:



Ա. ԱՄԱՏՐՅԱՆ

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 02.10.2012

ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 86-ԱՂԻ ՀՐԱՊԱՆՈՎ
ՆԱԽԱՐԱՐ ԳԱՆՈՒՍԱՏՐՅԱՆ



Կազմված է 7 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻ
ԿՈՂՄԻՑ 09/10 2012թ.

գրանցման թիվ 264.210715148
վկայական 034865148
ՀՎՀՀ ՔՕ 1 17761

Տարածքային բաժնի պետ

Արմենյան Մարգարյան

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան 2012թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1009-Ն որոշմամբ:

2. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ինչպես նաև կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

4. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

5. Կազմակերպությունը պատասխանատու չէ իր հիմնադրի պարտավորությունների համար: Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

6. Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

7. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իր անունից կարող է կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

9. Կազմակերպության պահպանման ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Կազմակերպության ֆինանսական միջոցները կարող են գոյանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող, ինչպես նաև օրենքով չարգելված միջոցներից:

10. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է բանկերում (այդ թվում նաև օտարերկրյա) բացել հաշիվներ ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով: Բանկային հաշիվների գումարներին ավելացած տոկոսները և արտոնությունները պատկանում են կազմակերպությանը:

11. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

12. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ ՍՐՖՍԿ ՊՈԱԿ

անգլերեն լրիվ՝ «Service Center of Social Housing Fund» State non-commercial organization State non-commercial organization.

անգլերեն կրճատ՝ SCSHF SNCO

ուսերեն լրիվ՝ «Центр обслуживания социального жилищного фонда» Государственная некоммерческая организация.

ուսերեն կրճատ՝ ЦОСЖФ ГНО:

13. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք.Երևան, Թիբիլիսյան խճուղի N 3:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

14. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է՝ սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված շենքերում (այսուհետ՝ շենքեր)՝ բնակվելու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ բնակվելու իրավունք ունեցող անձինք)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված բնակարանների, սոցիալ-հոգեբանական օգնության ծառայությունների և առաջնային բժշկական օգնության ծառայությունների տրամադրումը, բնակվելու իրավունք ունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի N 25 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում անօթևան միայնակ տարեցների և բնակարանի կարիք ունեցող՝ սոցիալական այլ խմբերի պատկանող անձանց համար սոցիալական բնակարանների համալիրի ստեղծման հայեցակարգով սահմանված սատարող ընտանիքների միջև փոխգործունեության կազմակերպումն ու համակարգումը, բնակվելու իրավունք ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, նրանց սոցիալական խնդիրների լուծմանն աջակցությունը, բնակվելու իրավունք ունեցող անձանց՝ իրենց զբաղեցրած բնակարանների առաջնային տեխնիկական սպասարկման գործում աջակցելը:

Կազմակերպության գործունեության առարկան Հայաստանի Հանրապետությունում սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման ու շահագործման ապահովումն է:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

15. Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում և իրականացնում է բնակվելու իրավունք ունեցող անձանց բնակեցումը հատկացված բնակելի տարածությունում.

2) կնքում է բնակարանի անհատույց օգտագործման պայմանագիր լիազորված պետական մարմնի կողմից սահմանված կարգով.

3) իրականացնում է շենքերի պահպանումը, բնակարանների տեխնիկական սպասարկումը.

4) հետևում է բնակվելու իրավունք ունեցող անձանց սպառած էլեկտրաէներգիայի և կոմունալ ծառայությունների վարձավճարների ժամանակին վճարմանը.

5) կազմակերպում է բնակվելու իրավունք ունեցող անձանց առաջին բուժօգնության, սոցիալական խորհրդատվության, հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության ծառայությունների տրամադրումը.

6) կազմակերպում է բնակվելու իրավունք ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ վերջիններիս կողմից դիմելու դեպքում.

7) անհրաժեշտության դեպքում, կազմակերպում է բնակվելու իրավունք ունեցող անձանց միջև ծագած խնդիրների վերաբերյալ քննարկումներ՝ համապատասխան մասնագետների մասնակցությամբ.

8) համագործակցում է շենքերի գտնվելու վայրի առողջապահական և սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների հետ՝ բնակվելու իրավունք ունեցող անձանց առողջապահական և սոցիալական խնդիրների լուծման նպատակով.

9) աջակցում է բնակվելու իրավունք ունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց համար անհատական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացմանը.

10) մասնակցում է շենքերի և դրանց հարակից տարածքներին առնչվող հարցերի քննարկմանը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում.

11) իր լիազորությունների շրջանակներում պարտավոր է ներկայացնել և (կամ) պաշտպանել կազմակերպության օրինական շահերը պետական (այդ թվում՝ դատական) և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում.

12) բնակվելու իրավունք ունեցող անձանց տալիս է տեղեկանքներ՝ շենքում բնակվելու և նրանց ընտանիքի կազմի մասին.

13) վարում է բնակվելու իրավունք ունեցող անձանց հաշվառման գրանցամատյան.

14) ապահովում է շենքերում և բնակելի տարածություններում առկա պետության կողմից տրամադրված գույքի տարեկան գույքագրման իրականացումը.

15) իր նախաձեռնությամբ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող շենքերի կառավարմանն ուղղված այլ լիազորություններ.

16) ծայրահեղ անհրաժեշտության դեպքում ապահովում է լիազորված անձանց մուտքը շենքի փակ բնակարաններ:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը (Հայաստանի Հանրապետություն)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, նրա լիազորած պետական մարմինը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ լիազորված պետական մարմին), գործադիր մարմինը՝ ի դեմս տնօրենի:

17. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1.) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների սահմանումը.

3) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

4) կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծումը՝ բացառությամբ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

18. Լիազորված պետական մարմինը՝

1) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ.

2) կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

3) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության գործունեության նկատմամբ.

4) հիմնադրի անունից կազմակերպության գործադիր մարմնի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) գործադիր մարմնի նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

7) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

9) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները.

10) իրականացնում է վերահսկողություն կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

11) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ.

12) համաձայնություն է տալիս կազմակերպության՝ գույքի ձեռքբերման հետ կապված որոշ գործարքների կնքման համար.

13) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

19. Կազմակերպության գործադիր մարմինը տնօրենն է, ով՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր.

- 4* աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատողներին.

- 5) կազմակերպության աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները՝ լիազոր պետական մարմնի համաձայնությամբ.

8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

20. Տնօրենի բացակայության դեպքում, վերջինիս փոխարինում է նրա տեղակալը կամ վարչական այլ աշխատող՝ տնօրենի առաջարկությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ լիազորված պետական մարմնի ղեկավարի հրամանով նշանակված անձը:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

22. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

23. Հիմնադիրը կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

24. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

25. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

26. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ ներքին աուդիտի համակարգի կողմից:

27. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

28. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

29. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու և հանձնելու անհատույց օգտագործման:

30. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը՝ պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները սահմանված կարգով ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

31. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության ծախսագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

32. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

33. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

34. Կազմակերպության լուծարմամբ դադարում է կազմակերպության գործունեությունը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

35. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

36. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

37. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Ք. Երևան

“-----” “-----” 2012թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, (այսուհետ՝ Փոխատու), ի դեմս «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն ----- ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և քաղաքացի ----- (անձնագիր՝ ... -----, տրված՝ -----թ., -----կողմից, ծնված՝ -----թ.), (այսուհետ՝ Փոխառու) մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրի համաձայն Փոխատուն Փոխառուին տրամադրում է ----- համայնքի ----- հասցեում գտնվող՝ թիվ----- շենքի -----հարկի N----- կոմունալ-կենցաղային հարմարություններով ապահովված բնակելի տարածություն անհատույց օգտագործման իրավունքով, իսկ Փոխառուն պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

1.2. Փոխատուն Փոխառուին ժամանակավոր, անհատույց օգտագործման է հանձնում անհրաժեշտ շարժական և անշարժ գույքը (այսուհետ՝ Գույք): Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով՝ համաձայն հավելվածի.

1.3. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փոխառուն իրավունք ունի՝

2.1.1. Պահանջել Փոխառուից պահպանել Փոխառուի կողմից հաստատված՝ սոցիալական բնակարանների ներքին կարգապահական և ընդհանուր համակեցության կանոնները, ինչպես նաև սույն պայմանագրի պահանջները.

2.1.2. Պահանջել որպեսզի Փոխառուն ժամանակին վճարի էլեկտրաէներգիայի և կոմունալ ծառայությունների վարձավճարները.

2.1.3. Պահանջել Փոխառուից Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.1.4. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ նորոգումը.

2.1.5. Փոխառուից պահանջել փոխհատուցել բնակարանին և գույքին իր մեղքով հասցված վնասը:

2.2. Փոխառուն պարտավոր է՝

2.2.1. Անհատույց տրամադրել բնակելի տարածություն՝ կոմունալ-կենցաղային հարմարություններով.

2.2.2. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը հանձնել սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ ---- օրվա ընթացքում.

2.2.3. Փոխառուին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին.

2.2.4. Փոխառուին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Գույքի նկատմամբ իր իրավունքների և պարտականությունների մասին:

2.3. Փոխառուն իրավունք ունի՝

2.3.1. Ազատորեն և նպատակային օգտագործել իրեն տրամադրված Գույքը.

2.3.2. Ստանալ տեղեկատվություն իր իրավունքների ու պարտականությունների մասին.

2.3.3. Դադարեցնել սույն պայմանագիրն իր գրավոր դիմումի հիման վրա՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Փոխառուին.

2.3.4. Այլ Փոխառուների կամ Սատարող ընտանիքի հետ անհամաձայնության կամ կոնֆլիկտային իրավիճակների դեպքում դիմել Փոխառուին.

2.3.5. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ----- օր հետո պահանջել Փոխառուից հանձնելու սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը.

2.3.6. Փոխառուի կողմից Գույքի թերությունների մասին չհայտնելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները.

2.4. Փոխառուն պարտավոր է՝

2.4.2. Պահպանել մաքրություն՝ բնակարանում և ընդհանուր օգտագործման տարածքներում.

2.4.3. Պահպանել հասարակական կարգը և ներքին կարգապահական կանոնները.

2.4.4. Սահմանված ժամկետում կատարել էլեկտրաէներգիայի և կոմունալ ծառայությունների վարձավճարները.

2.4.5. Գույքը պահպանել սարքին վիճակում.

2.4.6. Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.4.7. Կատարել Գույքի ընթացիկ նորոգումը.

2.4.8. Գույքը վերադարձնել Փոխատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում.

2.4.9. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն մշտական բնակության մեկնելու դեպքում եռօրյա ժամկետում այդ մասին հայտնել Փոխատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

3.1. Փոխառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե Փոխառուն՝

3.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

3.1.2. Չի կատարել Գույքի պահպանման՝ այդ թվում ընթացիկ նորոգում կատարելու իր պարտականությունները.

3.1.3. Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

3.1.4. Գույքը հանձնել է երրորդ անձի.

3.1.5. Չի կատարել սույն պայմանագրի 2.4.9. կետով նախատեսված իր պարտավորությունը.

3.2. Փոխառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե՝

3.2.1. Հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք Գույքի բնականոն օգտագործումը դառնում են անհնար, և որոնց մասին ինքը չգիտեր ու չէր կարող իմանալ պայմանագիր կնքելիս.

3.2.2. Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի այնպիսի հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում.

3.2.3. Փոխատուն չի կատարել Գույքը հանձնելու իր պարտականությունը:

3.3. Սույն պայմանագրի գործողությունը դադարում է նաև Փոխառուի մահվան դեպքում:

3.4. Փոխառուն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրի յուրաքանչյուր կողմ պատասխանատվություն է կրում Պայմանագրի պայմանների խախտման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.2. Մեկ տարվա ընթացքում սույն պայմանագրի 2.4.3. կետի պահանջները մեկից ավելի անգամ խախտելու դեպքում Փոխառուն կարող է Փոխառուին վտարել սոցիալական բնակարանից՝ այդ մասին նրան զգուշացնելով առնվազն մեկ ամիս առաջ:

4.3. Փոխառուն կարող է վտարվել սոցիալական բնակարանից, եթե նա մեկ տարվա ընթացքում առնվազն վեց ամիս, առանց հարգելի պատճառի, չի բնակվել իրեն տրամադրված բնակելի տարածությունում:

4.4. Փոխառուն կրում է անհատույց օգտագործման հանձնված Գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե Գույքը ոչնչացել կամ վնասվել է սույն պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան օգտագործելու հետևանքով, կամ այն, հանձնել է երրորդ անձի:

4.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները,

գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից և գործում է մինչև 201 թ. ----- :

6.2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով՝ փոխհամաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Փոխառուն պարտավորվում է սույն պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ազատել բնակարանը:

8.2. Պայմանագիրը ժամկետից շուտ կարող է լուծվել սույն պայմանագրով նախատեսված հիմքով:

8.3. Փոխատուի վերակազմակերպման դեպքում սույն պայմանագրով Փոխատուի իրավունքները և պարտականություններն անցնում են իրավահաջորդին:

8.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածը բաղկացած է 1 էջից և համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխատու

Փոխառու

հասցե

հասցե

Բանկային վավերապայմանները

ստորագրություն

ԿՏ

Անձնագիր, սերիա, համար, երբ և ում
կողմից է տրվել

ստորագրություն

Հավելված
 "-----" "-----" 2012թ-ին կնքված
 N ԲԱՕ----- պայմանագրի

ԱԿՏ N---
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

----- 201 թ.
 Պայմանագրի անվանումը -----
 պայմանագիր:
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ----- 201 թ.
 Պայմանագրի համարը՝ -----
 Փոխատուն, ի դեմս ----- սույն ակտի հիման վրա
 Փոխառուին՝ ի դեմս ----- է հանձնում
 հետևյալ գույքը.

Հ/Հ	Գույքի անվանումը	Գույքի մակնիշը	Գույքային համարը	Քանակը կամ քառ.մ.	Գույքի վիճակի համառոտ նկարագիրը
1	2	3	4	5	6
1.	Բնակելի մակերես			քառ. մ	
2.					
3.					
4.					
5.					
6.					

Գույքը հանձնեց

Գույքն ընդունեց

 (ստորագրություն)

 (ստորագրություն)

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Ք. Երևան

“-----” “-----” 2012թ.

«Առաջատար» և սոցիալական հարցերի նախարարությունը, (այսուհետ՝ Փոխատու), ի դեմս «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն ----- ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և քաղաքացի ----- (անձնագիր՝ ... -----, տրված՝ -----թ., -----կողմից, ծնված՝ -----թ.), (այսուհետ՝ Փոխառու) ի դեմս սատարող ընտանիքի չափահաս անդամի, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրի հիմնաձայն Փոխատուն Փոխառուին տրամադրում է ----- համայնքի ----- հասցեում գտնվող՝ թիվ----- շենքի -----հարկի N----- կոմունալ-կենցաղային հարմարություններով ապահովված բնակելի տարածություն անհատույց օգտագործման իրավունքով, իսկ Փոխառուն պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

1.2. Փոխատուն Փոխառուին ժամանակավոր, անհատույց օգտագործման է հանձնում անհրաժեշտ շարժական և անշարժ գույքը (այսուհետ՝ Գույք): Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով՝ համաձայն հավելվածի.

1.3. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փոխառուն իրավունք ունի՝

2.1.1. Պահանջել Փոխառուից պահպանել Փոխառուի կողմից հաստատված՝ սոցիալական բնակարանների ներքին կարգապահական և ընդհանուր համակեցության կանոնները, ինչպես նաև սույն պայմանագրի պահանջները.

2.1.2. Պահանջել որպեսզի Փոխառուն ժամանակին վճարի էլեկտրաէներգիայի և կոմունալ ծառայությունների վարձավճարները.

2.1.3. Պահանջել Փոխառուից Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.1.4. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ նորոգումը.

2.1.5. Փոխառուից պահանջել փոխհատուցել բնակարանին և գույքին իր մեղքով հասցված վնասը:

2.2. Փոխառուն պարտավոր է՝

2.2.1. Անհատույց տրամադրել բնակելի տարածություն՝ կոմունալ-կենցաղային հարմարություններով.

2.2.2. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը հանձնել սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ ----- օրվա ընթացքում.

2.2.3. Փոխառուին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին.

2.2.4. Փոխառուին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Գույքի նկատմամբ իր իրավունքների և պարտականությունների մասին:

2.3. Փոխառուն իրավունք ունի՝

2.3.1. Ազատորեն և նպատակային օգտագործել իրեն տրամադրված Գույքը.

2.3.2. Ստանալ տեղեկատվություն իր իրավունքների ու պարտականությունների մասին.

2.3.3. Դադարեցնել սույն պայմանագիրն իր գրավոր դիմումի հիման վրա՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Փոխառուին.

2.3.4. Այլ Փոխառուների կամ Սատարող ընտանիքի հետ անհամաձայնության կամ կոնֆլիկտային իրավիճակների դեպքում, դիմել Փոխառուին.

2.3.5. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ----- օր հետո պահանջել Փոխառուից հանձնելու սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը.

2.3.6. Փոխառուի կողմից Գույքի թերությունների մասին չհայտնելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները.

2.4. Փոխառուն պարտավոր է՝

2.4.2. Պահպանել մաքրություն բնակարանում և ընդհանուր օգտագործման տարածքներում .

2.4.3. Պահպանել հասարակական կարգը և ներքին կարգապահական կանոնները.

2.4.4. Սահմանված ժամկետում կատարել էլեկտրաէներգիայի և կոմունալ ծառայությունների վարձավճարները.

2.4.5. Գույքը պահպանել սարքին վիճակում.

2.4.6. Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.4.7. Կատարել Գույքի ընթացիկ նորոգումը.

2.4.8. Գույքը վերադարձնել Փոխատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

2.4.9. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն մշտական բնակության մեկնելու դեպքում եռօրյա ժամկետում այդ մասին հայտնել Փոխատուին:

2.4.10. Ծանոթանալ սոցիալական բնակարանների բնակիչների հետ.

2.4.11. Բնակիչների կարիքներից ելնելով՝ համագործակցել Փոխատուի հետ, բնակիչների խնամքի կազմակերպման, նրանց բժշկական, սոցիալական, տնտեսական խնդիրների կազմակերպչական հարցերը լուծելու նպատակով.

2.4.12. Անհրաժեշտության դեպքում ցուցաբերել առաջին օգնություն և օգնել բնակիչներին առօրյա կենցաղային գործերում.

2.4.13. Անհրաժեշտության դեպքում բնակիչների խնդրանքով կատարել գնումներ, օգնել կենցաղային իրերի վերանորոգման աշխատանքներում.

2.4.14. Փոխատուի մասնակցությամբ ձևավորել փոխօգնության խմբեր և կազմակերպել վերջիններիս գործունեությունը՝ զարգացնելով բնակիչների միջև փոխօգնության գաղափարը.

2.4.15. Անհրաժեշտության դեպքում օժանդակել կենտրոնում տարածքի սանիտարական մաքրման ու կանաչապատման աշխատանքներին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

3.1. Փոխատուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե Փոխատուն՝

3.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

3.1.2. Չի կատարել Գույքի պահպանման՝ այդ թվում ընթացիկ նորոգում կատարելու իր պարտականությունները.

3.1.3. Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

3.1.4. Գույքը հանձնել է երրորդ անձի.

3.1.5. Չի կատարել սույն պայմանագրի 2.4.9. կետով նախատեսված իր պարտավորությունը.

3.2. Փոխառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե՝

3.2.1. Հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք Գույքի բնականոն օգտագործումը դառնում են անհնար, և որոնց մասին ինքը չգիտեր ու չէր կարող իմանալ պայմանագիր կնքելիս.

3.2.2. Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի այնպիսի հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում.

3.2.3. Փոխատուն չի կատարել Գույքը հանձնելու իր պարտականությունը:

3.3. Սույն պայմանագրի գործողությունը դադարում է նաև Փոխառուի մահվան դեպքում:

3.4. Փոխատուն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրի յուրաքանչյուր կողմ պատասխանատվություն է կրում Պայմանագրի պայմանների խախտման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.2. Մեկ տարվա ընթացքում սույն պայմանագրի 2.4.3. կետի պահանջները մեկից ավելի անգամ խախտելու դեպքում Փոխատուն կարող է Փոխառուին վտարել սոցիալական բնակարանից՝ այդ մասին նրան զգուշացնելով առնվազն մեկ ամիս առաջ.

4.3. Փոխառուն կարող է վտարվել սոցիալական բնակարանից, եթե նա մեկ տարվա ընթացքում առնվազն վեց ամիս, առանց հարգելի պատճառի, չի բնակվել իրեն տրամադրված բնակտարածությունում.

4.4. Փոխառուն կրում է անհատույց օգտագործման հանձնված Գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե Գույքը ոչնչացել կամ վնասվել է սույն պայմանագրին կամ Գույքի նշանակությանն

անհամապատասխան օգտագործելու հետևանքով, կամ այն, հանձնել է երրորդ անձի:

4.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից և գործում է մինչև 201 թ. -----:

6.2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով՝ փոխհամաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Փոխառուն պարտավորվում է սույն պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ազատել բնակարանը:

8.2. Պայմանագիրը ժամկետից շուտ կարող է լուծվել սույն պայմանագրով նախատեսված հիմքով:

8.3. Փոխատուի վերակազմակերպման դեպքում սույն պայմանագրով Փոխատուի իրավունքները և պարտականություններն անցնում են իրավահաջորդին:

8.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹ

Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածը բաղկացած է 1 էջից և համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխառու

Փոխառու

հասցե

հասցե

Բանկային վավերապայմանները

ստորագրություն

ԿՏ

Անձնագիր, սերիա, համար, երբ և ում
կողմից է տրվել

ստորագրություն

Հավելված
 "-----" "-----" 2012թ-ին կնքված
 N ԲԱՕ----- պայմանագրի

ԱԿՏ N---
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

----- 201 թ.
 Պայմանագրի անվանումը -----
 պայմանագիր:
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ----- 201 թ.
 Պայմանագրի համարը՝ -----
 Փոխատուն, ի դեմս ----- սույն ակտի հիման վրա
 Փոխառուին՝ ի դեմս ----- է հանձնում
 հետևյալ գույքը.

Հ/Հ	Գույքի անվանումը	Գույքի մակնիշը	Գույքային համարը	Քանակը կամ քառ.մ.	Գույքի վիճակի համառոտ նկարագիրը
1	2	3	4	5	6
1.	Բնակելի մակերես			քառ. մ	
2.					
3.					
4.					
5.					
6.					

Գույքը հանձնեց

Գույքն ընդունեց

 (ստորագրություն)

 (ստորագրություն)